# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1224-Ա «16» հոկտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ «ՆՈՐ-ՆՈՐՔ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 18-ը ներառյալ «Երևանի «Նոր-Նորք» առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացնել 2022-2024 թվականների ֆինանսական աուդիտ:
2. «Երևանի «Նոր-Նորք» առողջության կենտրոն» ՓԲԸ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս.Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետներ Ա.Ավետիսյանին, Ս.Հարությունյանին և Ա.Շահբազյանին:
3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**